ՆՈՐ-ԴԱՐ

№ 110 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Երեքշաբթի, 29 Յունիսի — 1893 — Երեքշաբթի, 29 Յունիսի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 110

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչ 2-
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., [illegible] համար կրկնապատիկը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Կովկասի կառավարչապետի վերադարձը։ Պ. Կ. Եզեանի նոր պաշտօնը։ Թիֆլիսի Վարկի ընկերութեան ժողովը։ Գաւառներից ստացուած տեղեկութիւններ։ Պանրի թանկութեան պատճառները։ Գիմնազիօնների ուսումնական խորհրդի որոշումը։ Հոգեհանգիստ հանգուցեալ ուսուցիչ Մարտիրոս Տէր-Յովհաննիսեանի համար։ Վանքի աւագ եկեղեցին։ Կարանտին Սև ծովի նաւահանգիստներում։ Կերօսինի համար արկղներ։ Աստրախանից։ Բաթումից։ Ստացուած գրքեր։ «Մասիս» շաբաթաթերթը։ Աստրախանում կալանաւորուածներ։

Պօլսի թերթերից։

Նոր օրէնք հայ-կաթոլիկ համայնքների վարչական գործերը կառավարելու համար։

Հայ կինը։

Քաղաքական. — Ֆրանսիա։ Բուլղարիա։ Սերբիա։ Ռուսիա և Չինաստան Սպանիա։

Խառն լուրեր։

Հեռագիրներ։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կիրակի, յունիսի 27-ին, Կովկասի կառավարչապետը վերադարձաւ Թիֆլիս իւր դէպի Կարս կատարած ուղեւորութիւնից։

—

Դաղստանի խորհրդական հայ ազգի պ. Կարապետ Եզեանը Բարձրագոյն հրամանով կարգուած է լուսաւորութեան մինիստրութեան խորհրդի անդամ։

—

Չորեքշաբթի, յունիսի 30-ին, կայանալու է Թիֆլիսի վարկի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

—

Գաւառներից, որպէս յայտնի է մեր ընթերցողներին, շատ տխուր տեղեկութիւններ ստացանք և ստանում ենք կարկտի տուած վնասների մասին։ Անշուշտ ընթերցողը դեռ մոռացած չի լինիլ այն տխուր տպաւորութիւնը, որ թողեց Շուլաւէրից մեր թղթակցի հաղորդած տեղեկութիւնը Բորչալուի գաւառի տասնեակ գիւղերին կարկտի հասցրած սարսափելի վնասի մասին։ Տասը և մէկ գիւղ զրկուել է իւր ցանքից, իւր տարեկան [illegible]՝ արտերից և այգիներից։ Այգիներն այնպէս խիստ վնասուել, որ թերը ջարդուել, փչացել են, որ եկող տարուայ համար էլ նրանցից յոյս չ'կայ։ Արտերի տեղը կարկտից կամ բոլորովին սևացած են և կամ ցօղունների արմատներն են մնացել անկուած։

Այժմ «Նով. Օբոզ.»-ին այդ վնասների մասին հաղորդել են հետևեալ նոր տեղեկութիւնը, ըստ որում 11 գիւղերի կարկտից վնասուած արտերի տարածութիւնը, որ ստուգուած է պաշտօնապէս, 1,190 դեսեատին տեղ է բռնում, որոնց վրայի ցանքերը գնահատուած են աւելի քան 89,440 ր., իսկ վնասուած այգիների տարածութիւնն է 47 դեսեատին, որոնց վնասն հասնում է 18,350 ր.։ Այդպիսով Բորչալուի գաւառի 11 գիւղերին հասցրած վնասի քանակութիւնը վերոգրեալ հաշուով լինում է 107,790 ր.։ Աչքի առաջ ունենալով վնասի այդքան մեծ քանակութիւնը (և որքան մեծ է դա թշուառ գիւղացիների համար) և ժողովրդի կարօտ ու ողորմելի դրութիւնը՝ հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն, որով կարելի լինի մի կերպ պահպանել թշուառ գիւղացիների գոյութիւնը, մանաւանդ որ խեղճերը ձմեռ. տաւարի էլ մեծ կորուստներ ունեցան։

—

Մեզ հաղորդում են, որ ուսումնարանական վարչութիւնն առաջիկայ ուսումն. տարուայ համար մի նախագիծ է կազմում միւս տարուայ արձակուրդներին Թիֆլիսի գիմնազիօնների բարձր դասատան աշակերտներին տանել Հելլադա — (Յունաստան) արշաւանք կատարելու։

—

Այս տարի Թիֆլիսի հասարակ դասակարգը պանրի պաս է պահում, որովհետև պանիրը մինչև օրս չտեսնուած կերպով թանկացել է։ Մինչ անցեալ տարի այս ժամանակը պանրի պուդը 3—4 ր. կամ ֆունտը 12 կոպ. կարելի էր լաւ պանիր առնել, հիմա երբեմն թէ լաւ պանիրը ծախւում է պուդը 6 ր.—6 ր. 50 կ., բայց մանրավաճառները ծախում են ֆունտը 25—30 կ., իսկ աւելի վատ պանիրը, (որի երեսը ըրէժանը քաշած է) որ ուտել չի կարելի, ֆունտը ծախւում է 20 կ.։ Այդ տեսակ պանիրը ջրի մէջ դցած ժամանակն էլ այնքան է պնդանում, որ դանակն անգամ չի կտրում։

Սրա պատճառը մէկ այն է, որ այս տարի սաստիկ ցրտերից և ալափի պակասութիւնից շատ ոչխարներ կոտորուեցին։ Եւ երկրորդ այն՝ որ քաղաքից դուրս գտնւում են բաղկալներ և կինտոներ, որոնք այնտեղ և եթ դնում են եկած պանիրը ու պատճառ դառնում թանկութեան։ Երրորդ՝ թէև Թիֆլիսում արգելուած է, որ հրապարակներում մանրավաճառները և վերոյիշեալները մինչև ժամը 12-ը ոչինչ չառնեն, բայց դրանք այդտեղ արհեստաւորի հագուստով մարդիկ են պահում, որոնք վաղօրօք առնում են հրապարակ մտած պանիրը և կենսական մթերքները և անմատչելի դարձնում աղքատ ժողովրդի համար։

Միւս կողմից նկատւում է պանրի վերաբերութեամբ այսպիսի խարդախութիւն։ Ամէն մի պանիր գնող տեսնելով, որ պանրի երեսը դեղին է, կարծում է թէ՝ երեսը (հում սերը) քաշած չէ, ուրեմն լաւ է և տալիս է այն գինը, ինչ գնով որ ծախւում է ոչխարի լաւ պանիրը. տանը կտրում են տեսնում, որ խաբուել են։ Այսինքն պանիր պատրաստողները նախ քան կաթը մայա տալը՝ (պանիր պատրաստելը) երեսը քաշել են և ապա պանիր շինելուց յետոյ դրել են արևի տակը կամ երեսին իւղ և դմակ են քսել, որից պանիրը դեղնել է։ Հրաւիրում ենք ում անկն է նրա ուշադրութիւնն այս բանի վրայ։

—

Հայ թատրոնի գործին համակրողները յունիսի 30-ին, չորեքշաբթի երեկոյեան ժողով են ունենալու «Իժնի Նոմերներում»։ Ժողովն զբաղուելու է առաջիկայ տարուայ համար հայոց թատրոնի համար մշտական դերասանական խումբ կազմելու մասին, որպէս զի առաջիկայ սեզոնին հայերէն կանոնաւոր ներկայացումներ տրուին։ Ցանկանում ենք յաջողութիւն։

—

Կիրակի, յունիսի 27-ին, Չիգրաշէնի Աւետեաց) եկեղեցում կատարուեց մեր աշխատակից հանգուցեալ ուսուցիչ Մարտիրոս Տէր-Յովհաննիսեանի հոգեհանգիստը։ Այդ հոգեհանգիստը կատարել տուեցին դժբաղդ ու վաղամեռիկ ուսուցիչ Տէր-Յովհաննիսեանի մօտիկ ազգականները։ Հոգեհանգստին ներկայ էր մեծ բազմութիւն, որոնց մէջ աչքի էին ընկնում շատ հայ ուսուցիչներ, որոնք եկել էին իրենց յարգանքը մատուցանել իրենց արժանաւոր պաշտօնակցին։ Շատ տխուր և անգամ սրտաճմլիկ տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրայ հանգուցեալի դեռահաս ամուսնու ողբագին հեծկլտանքը։ Թշուառը քիչ մնաց ուշագնաց լինէր. նրան մեծ դժուարութեամբ եկեղեցուց դուրս բերեցին։

Հանգուցեալի համար հոգեհանգիստ կատարուեց և անցեալ կիրակի, յունիսի 20-ին, Շամքոռեցոց Կարմիր Աւետարան եկեղեցում։ Այդ հոգեհանգիստը կատարել տուեցին հանգուցեալի ընկեր ուսուցիչները։ Հանգուցեալի յիշատակն յարգելու համար հոգեհանգստին ներկայ էր թերթիս պ. խմբագիրն իւր աշխատակիցներով։

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնել և յայտնում ենք մեր աշխատահանգուցեալ կից Մարտիրոս Տէր-Յովհաննիսեանի վաղաժամ կորստեան մասին։ Այս վերջին օրերս մեր հայ ուսուցչական ընտիր ոյժերից երկու հոգի պակսեցան՝ մէկը մեր աշխատակից հանգուցեալ ուսուցիչ Մարտիրոս Տէր-Յովհաննիսեանն էր, որ Սղնախում նահատակուեց իրեն համարեա անծանօթ մի չարագործի ձեռքով, իսկ միւսը՝ պատուական երիտասարդ—ուսուցիչ Դանիէլ Տէր-Զաքարեանցը, որ թողեց իւր դժբաղդ ամուսնուն իւր մատղաշ զաւակներով անմխիթար և թշուառ դրութեան մէջ։

—

Մեզ գրում են. «Մենք նեղանում ենք, որ Թիֆլիսի հասարակ դասակարգին պատկանող հայ ժողովուրդը շաբաթ ու կիրակի օրերը փոխանակ եկեղեցի գնալու, անց է կացնում գինետներում արբեցութեամբ և թղթախաղով։ Եթէ մեղաւոր է ժողովուրդը նրանով, որ եկեղեցի չէ յաճախում, աւելի մեղաւոր են և նրանք, որոնք ժողովուրդին սառեցրել են եկեղեցուց։

Մեր ժողովուրդը շատ քիչ է գնում եկեղեցի, գնացած ժամանակն էլ թէ եկեղեցին և թէ սպասաւորներին այնպիսի դրութեան մէջն է գտնում, որ մարդ գնալը փոշմանում է։ Շատերից մի օրինակ։

Վանքի աւագ եկեղեցին ունի 4 քահանայ և մի սարկաւագ և բաւականին էլ տիրացուներ. բայց շաբաթ երեկոյեան այդտեղ միայն մի քահանայ կար և երկու տիրացու, մէկը բուրվառ էր տանում, իսկ միւսը մի դասից միւսն էր վազում։ Ո՞ւր էին միւս քահանաները, սարկաւագը և տիրացուները չկարողացայ իմանալ. միայն մեզ յայտնեցին թէ, որովհետև հարուստ դասակարգն ամարանոց է գնացել, հետևապէս և հասարակ դասակարգն էլ ոնց որ է եօլայ կ'երթայ, ուստի և աւելորդ էին համարել եկեղեցի գալ։ Դեռ սա Թիֆլիսի առաջին եկեղեցին է, որ այսպիսի դրութեան մէջն է գտնւում, ինչ կլինին միւսները. կամ ինչով էր զանազանւում այդ օրը Վանքի աւագ եկեղեցին գիւղական եկեղեցուց, որտեղ միայն քահանան կանգնած դասումը թէ փոխերն է ասում, թէ քարոզները, թէ աղօթքները և թէ մաղթանքները։ Ասենք գիւղում տիրացուներին վարձ չեն տալիս և քահանան էլ հազիւ է կարողանում իւրեն գլուխը պահել։ Իսկ Թիֆլիսի տիրացուները հօ գիւղական քահանաներից աւելի շատ են վարձատրւում և լաւ ապրում, որտեղ էին այդ երեկոյեան և ինչ գործով էին զբաղւում։ Ցանկալի էր, որ հոգևոր իշխանութիւնը լուրջ ուշադրութիւն դարձնէր այս բանի վրայ։

—

«Պետր. Վեդ.» ասելով, ռուսաց և թիւրքաց կառավարութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել՝ Սև ծովի ափերի վրայ գտնուած նաւահանգիստներում և տեղերում կազմակերպել կարանտին-առողջապահական հսկողութիւն։

—

«Օդես. Վեստ.» հաղորդում է, որ Օդեսսի վրայով Բաթում են ուղարկւում շատ տախտակներ և փայտէ զանազան նիւթեր, որոնցից պիտի կերօսինի համար արկղներ պատրաստուին։ Այդ փայտեղէնն ուղարկւում է գլխաւորապէս Կիևից։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ.—Թեմակալ առաջնորդ Գէորգ սրբազանը սուրբ Աստուածամօր աւագ եկեղեցում, յունիսի 20-ին, կիրակի մեծ հանդիսով պատարագ մատոյց՝ քաղաքիս ամբողջ հոգևորականութեան և ժողովրդեան խուռն բազմութեան ներկայութեամբ։

Ս. Պատարագի որոշեալ ժամանակ Նորին Սրբազնութիւնը՝ պատշաճաւոր համառօտ բանախօսութիւնից յետոյ՝ յիշեց ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի Տ. Տ. Մկրտչի պատուական անունը և սուրբ պատարագից յետոյ կատարուեց Օգոստափառ Կայսերական Տան համար գոհացողական մաղթանք։ Հայ հասարակութեան նշանաւոր ներկայացուցիչները ներկայացան սրբազան առաջնորդին իրենց խնդակցութիւնը յայտնելու։

—

ԲԱԹՈՒՄԻՑ.—յունիսի 24-ին, տեղիս թատերասէրների խումբը յօգուտ մի չքաւոր ուսանողի ներկայացրեց «Թուղթ խաղացողի կեանքը» պիեսան։ Ներկայացումը յաջող անցաւ։ Դահլիճը համարեա լիքն էր հանդիսականներով։ Թէ ինչքան արդիւնք կլինի ստացուած, առ այժմ յայտնի չէ, սակայն ենթադրում են որ զուտ արդիւնք 200 ր. աւելի կլինի։ Համարեա բոլոր դերակատարները յաջող կատարեցին իրենց դերերը։ Ներկայացման վերջումը դրուեցան կենդանի պատկերներ։ Հանդիսականները շատ ուրախ տպաւորութեան տակ ցրուեցան։

—Այստեղ մի կասկածելի հիւանդութեամբ մահուան դէպք պատահեց։ Մի սայլապան ախոռում յանկարծ հիւանդացաւ։ Նրան անմիջապէս տարան հիւանդանոց ուր նա շուտով մեռաւ։ Նրա հիւանդացած տեղն առողջապահութեան միջոցներ գործ դրուեցան։ Կարծում էին թէ այդ խոլերայի դէպք է. սակայն բանից երևաց, որ այդպիսի բան չ'կայ. Նման հիւանդութեան ոչ մի դէպք չէ եղած։

—Առևտուրն այստեղ սաստիկ ընկած է։ Ամառուայ շոգերն սկսուել են։

—

Ստացել ենք հետևեալ նոր հրատարակուած գրքերը.

1. «Շար հայ կենսագրութեանց», հեղ. Աբրահամ Յ. Այվազեանի, հատոր երկրորդ, Կ. Պոլիս, տպարան Պալտատլեանի։

2. Նոյնը հատոր երրորդ։ Պ. Այվազեանն այսպիսով մտադիր է շարունակել իւր «Հայ կենսագրութիւնների շարքերը», որ մի գեղեցիկ և նպատակայարմար գործ է։ Այս երկու հատորների մէջ ի միջի այլոց կան Խ. Աբովեանի և Մ. Նալբանդեանի կենսագրութիւնները, (սակայն մեզ մի քիչ տարօրինակ թուաց, երբ տեսանք վերջիններիս ազգանունները խիստ հայացուած, այն է՝ «Պայտարեանց»)։ Կ. Պօլսի թերթերի բերած վերջին տեղեկութիւններից ուրախութեամբ իմանում ենք, որ պ. Այվազեանի այս «Շար հայ կենսագրութեանց» աշխատութիւններն արժանացել են «Սահակ Մեսրոպեան» մրցանակին։

3. «Իշխանն ու աղքատը», Մարկ Տուէնի, թարգ. պ. Դ. Շահբուդաղեանի, տպուած է Մ. Վարդանեանի տպարանում։

—

«Նոր-Դար»-ի № 109-ում արտատպելով «Մասիս» շաբաթաթերթից նոյն թերթի խմբագրապետ պ. Ա. Սուրենեանի «Հայ կինը» առաջնորդ յօդուածը, այս համարի մէջ էլ հրատարակում ենք նոյն վերաբերութեամբ տիկին Արուսեակի յօդուածը, որ «Մասիս» խմբագրական յօդուածի պատասխանն է։

—

Թիֆլիսում Աստրախանից հեռագիր է ստացուել, որ այնտեղ կալանաւորել են երկու տարի սրանից առաջ Թիֆլ. Մետեխի բանտից փախած Նուրով Թուրք երեք եղբայրներին, որ Բորչալուի գաւառի հարուստ աղալարներից են։ Նրանք, «Նով. Օբոզ.» ասելով, դատապարտուած էին տաժանակիր աշխատանքի՝ իրենց կատարած գողութիւնների և աւազակութիւնների համար։ Կալանաւորները Աստրախանից Թիֆլիս կ'ուղարկուին։

—

Երկուշաբթի, յունիսի 28-ին, երեկոյեան ժամը 5-ից 40 րոպէ անց կրակ յայտնուեցաւ Աղմուրեան դեղատան նկուղից, ուր պահւում է դեղերի և քիմիական նիւթերի պահեստը։ Քաղաքային տունը այդպիսով վտանգի էր ենթարկուած։

Ասում են, որ դեղատան ծառայողներից մէկը ճրագը ձեռքին նկուղն է մտել և անզգուշութիւնից սպիրտը վառուել է։ Իսկապէս հրդեհը չէր երևում, որովհետև նկուղն թագնուած էր, և դեղատնից և դեղերի խանութից ահագին մուխ էր բարձրանում։

Զարմանալին այս էր, որ սկզբումը ջուր չէր ճարւում։ Հրդեհին հետզհետէ բացի ոստիկանապետի օգնականից եկան՝ պ. Նահանգապետը, նրա օգնականը, յետոյ երկրիս պ. Կառավարչապետը։ Ամբողջ Երևանեան հրապարակը լիքն էր խուռն բազմութեամբ, մինչև անգամ քարվանսարայի և տների կտուրները հանդիսատեսներով զարդարուել էին։ Բաւականին թուով զինուորներ և ոստիկանները՝ կարգը պահպանում էին։ Քաղաքային տան տակը գտնուող մագազինների ապրանքները բոլորը դուրս էին ածում, ինչպէս և քաղաքային դիւանատան բոլոր գործերը և կահ կարասիքը, իզուր տեղ, շտապ և կոպիտ ձեռքերով պատուհաններից բոլորը դուրս էին ածում և մեծ մասը փչանում էին և քամին էր տանում։

Անտարակոյս հրդեհից չէ այնքան վնասը լինելու, որքան հրդեհի երկիւղից անշնորհք ձեռքերով ամէն ինչ դէս ու դէն շպրտելուց։

Ժամի 9-ին երեկոյեան դեռ հրդեհը կատաղաբար շարունակւում էր նկուղներում։ Խեչ. Աղմուրեանը, որ մի պատուական մարդ է, շատ վնասուեցաւ ինչպէս և աւելի պակաս չափով ուրիշները։ Քաղաքային գործերից շատերը փչացած կլինին յօգուտ կամ ի վնաս շատերի։

ԲԱԹՈՒՄԻՑ.— Մեր ծխական դպրոցների համար նոր կարգադրութիւններ են եղած նրանց առաջ տանելու տեղ, ուզում են յետ տանել: Արժ. Թեմական տեսչին, որ այստեղ էր, հոգաբարձութիւնը յայտնել է, թէ նիւթական միջոցների սղութեան (*) պատճառով պէտք է քչացնել բաժանմունքների թիւը, պէտք է ուսուցչաց վարձատրութիւնն առաջին կարգից վերածել երկրորդ կարգի և ի լրումն ամենայնի հոգաբարձուներն առաջարկել են աշակերտ աշակերտուհի մի տեղ նստացնել՝ բոլոր բաժանմունքների թիւը, հինգից երեք դարձնելով:

Ասում են որ արժ. Թեմական տեսուչը մասամբ համաձայնուել է նրանց հետ, խոստանալով վերադարձին կրկին զբաղուել այս հարցով և ընդհանուր ժողով կազմելով, լաւ ծանօթանալ ուսումնարանների դրութեան հետ:—Երբ ուսումնարաններն այսքան յետ են մնացել և մնալու են, էլ ինչ կարիք կար առաջին ծախսեր անել և ուսումնարանների համար փառաւոր՝ շինութիւն կառուցանել: Եւ մինչ Բաթումի պէս հարուստ հայ հասարակութիւնը չի կարող մի կանոնաւոր ուսումնարան պահել, գոնէ այնպէս անել, որ ուսումնարանի գործն առաջ գնալու տեղ յետ էլ չ'գնայ: Հրաւիրում ենք Բաթումի ամբողջ հայ հասարակութեան լուրջ ուշադրութիւնն իրենց որդոց այդ կրթարանների ողորմելի դրութեան վրայ: Ասենք հոգաբարձուներն իրենց հանգստութեանն են ման գալիս,—հասարակութիւնն ինչ է մտածում:

—

ԴՁԼԱՐԻՑ.—Անցեալ 1892 թուի ճիշտ այս ժամանակն էր որ՝ Սիրովբէ Վլասեանցին սպանեցին իւր այգում: Դեռ չէինք մոռացել այս ցաւալի դէպքը, որ յունիսի 13-ին-օրը ցերեկով քաղաքիս ամենաբազմամարդ տեղում դաշոյնով վիրաւորեցին մի հայի, իսկ յունիսի 19-ին զումուղցի մշակները՝ թուով եօթն հոգի, տեղացիներից մէկի այգում՝ բաքոսին երկրպագելուց յետոյ՝ սաստիկ հարբելով, կռուի են բռնւում այգու առաջից անցնող մի քանի հայ մշակների հետ. բանը հասնում է բռունցքի և ամենից վերջն էլ այնտեղ, որ այդ զումուղցիները սուսերամերկ ընկնում են հայերի վրայ: Հայերը չունենալով ոչ մէկ զէնք, սկսում են փախչել: Այս խռովութեան միջոցին հարևան մի երիտասարդ Յովակիմ Գէորգեան Յովակիմեանց իւր այգուց դուրս է գալիս և միջամտում է կռուին հաշտեցնելու նպատակով. բայց տարաբաղդաբար կատաղած, ինքն իրենից մոռացած, մահմեդականները դաշոյնի ծանր ու խոր վէրք են հասցնում անբաղդ երիտասարդին, որ անմիջապէս մեռնում է: Պէտք է երևակայել հանգուցեալի մօր և քոյրերի անմխիթար դրութիւնը... պարտաւոր ենք համարում հրաւիրել ոստիկանութեան լուրջ ուշադրութիւնը՝ տեղի ունեցող այսպիսի մարդասպանութիւններին և գողութիւններին, մի անգամից վերջ դնելու համար:

Ամենայն տարի կրկնուող աղէտը, այս տարի էլ է ուզում սկսել՝ գետը դարձեալ սպառնում է քաղաքին և թէ հրջակայքի ցանքերին ու այգիներին. մի քանի տեղերում գետն արդէն հասած է հողէ պատնէշի հետ հաւասարուել:

Շուտով պատրաստ կլինի պ. Յ. Փաբեմուզեանի նոր կազմակերպած քառաձայն երգեցիկ խումբը՝ բաղկացած մօտաւորապէս 60 հոգուց. ցանկանում ենք յաջողութիւն:

—Արժանապատիւ Գէորգ քհ. Միրզամեանը իւր ազդու, բարոյական-կրթական քարոզներով մեծ համակրանք է վայելում ժողովրդից: Բայց առաջաւորներից մի քանիսը դժգոհ են. և այդ բանի մէջ երևի մեծ դեր են խաղում անձնական հաշիւները, որոնց միանգամից վերջ տալը ցանկալի է ամենիս համար:

Կ. ՊՈԼՍԻ ԹԵՐԹԵՐԻՑ

Ս. Պատրիարք հայրը կիրակի օրը յունիսի 13-ին կայս. պալատ գնաց Բայրամի տօնը շնորհաւորելու և ընդունուեցաւ առաջին սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի Պէյի կողմէ: Ս. Պատրիարքը շնորհաւորելով Բայրամի տօնը, բարեմաղթութիւններ ըրաւ Վ.Ն. Սուլթանին կենացը համար: Հաճի Ալի Պէյ Վ.Ն. Սուլթանին մատուց Ն. Ամենապատուութեան շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները, և դառնալով Ս. Պատրիարքին հաղորդեց Վ.Ն. Սուլթանի բարձր գոհունակութիւնն ու Կայսերական բարևները: Ս. Պատրիարք Հայրը այցելեց նաև բոլոր նախարարներուն:

—Ըստ տրամադրութեան Իզմիրեանց կտակին, հինգշաբթի օրը տեղի ունեցաւ ի Ղալաթիա, Սահակ Մեսրոպեան մրցանակաբաշխութեան հանդէսը: Արժ. Տ. Յովհաննէս Ա. քահանայ Հինքեարպէյէնտեան իր [illegible] համար ստացաւ առաջին մրցանակը՝ վաթսուն ոսկի, և Աբրահամ էֆ. Այվազեան իր Նոր Հայ [illegible] գործին համար երկրորդ մրցանակը՝ քսան հինգ ոսկի, նախորդ տարեշրջանէն մնացած:

Ուսուցչաց քննիչ Յանձնաժողովոյ երկրորդ նիստը տեղի ունեցաւ յունիսի 11-ին Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, ատենապետութեամբ Կարապետ էֆէնտի Իւթիւճեանի և ի ներկայութիւն անդամոց մեծամասնութեան:

Յանձնաժողովն իւր սոյն գումարման մէջ՝ յետ նախապատրաստական ինչ ինչ գործողութեանց՝ յատուկ տոմարի մը մէջ և թուահամարի կարգաւ արձանագրեց վկայական ստանալու համար ներկայացող անձանց անունները, որպէսզի յաջորդ նստին մէջ նոյն կարգաւ կատարէ անոնց քննութիւնները՝ համաձայն ուսումնական Խորհուրդէն պատրաստեալ ծրագրին որ ի մօտոյ պիտի հրատարակուի ազգ. լրագրաց միջոցաւ:

Իւրաքանչիւր նստին մէջ հետզհետէ ներկայացող անձանց քննութիւնք սոյն եղանակաւ պիտի կատարուին, առանց մէյն կամ միւսին առաջնութիւն տրըուելու:

—

ԶՄԻՒՌՆԻԱ, 10 յունիսի.—Քաղաքիս ազգայնոց կրթական գործն ժամանակէ մը ի վեր շատ ողբալի վիճակի մէջ լինելով, ընդհանուր խօսակցութեան առարկայ եղած հետևեալ մի քանի խնդիրներն կուզեմ հրապարակի վրայ դնել և անոնց պատասխանները խնդրել. որպէս զի եթէ կարելի է՝ բուժուին գայթակղեալ միտքերը:

Ա. Իրա՞ւ է որ տեղւոյս Ուսումնական Խորհուրդը լոկ երկու անդամէ բաղկացած է:

Բ. Իրա՞ւ է որ Ատենապետն Դ. էֆ. Բարազեան, իր երկու անդամակիցներուն ապօրէն ընթացքէն վշտացած քաշուած է:

Գ. Իրա՞ւ է որ վարժարանաց մէջ բնաւ բարեկարգութիւն չկայ և աշակերտ ու աշակերտուհի թէ Խորհրդին և թէ Տեսչին նկատմամբ ամենաթեթև յարգանքն իսկ չունին:

Դ. Իրա՞ւ է որ գանակոծութիւնը կը տիրապետէ մանաւանդ Մեսրոպեան վարժարանին մէջ:

Ե. Իրա՞ւ է որ գանակոծուած աշակերտներն ճարահատ՝ ծեծեր են դասատու մը և այս պատճառաւ դպրոցէն արտաքսուեր են:

Զ. Իրա՞ւ է որ մէկ քանի նորեկ վարժապետներ դուրսը նախ դաս կ'առնուն և ապա դպրոց կ'ուգան և այդ դասերը կ'աւանդեն:

Է. Իրա՞ւ է որ մարմնամարզական դասերը և այլ ուսումներ կ'աւանդուին աշակերտուհիներու՝ պատանիներու միջոցաւ:

Ը. Իրա՞ւ է որ օտար վարժարաններ յաճախող աշակերտներ կան որ տեղւոյս Թաղականներու և Խորհրդականներու զաւակներ են:

Թ. Իրա՞ւ է որ Ուսումն. Խորհրդին արդի երկու անդամներն, մանկանց դաստիարակութեան տեսակէտով անյարմար են այդ պաշտօնը վարելու:

—

Յունիսի 9էն 10. Պասարի մէջ նոր դէպք չէ պատահած և առաջուան բռնուածներէն երեք մարդիկ մեռեր են: Յունիսի 9-ին Հաճըէծը Զէպիրի մէջ 5 դէպք 1 մահ: Նահանգին միւս կողմերուն մէջ որև է դէպք չէ պատահած:

Նանեար Ցօլոնեա գաւառակին մէջ պատահած երկրաշարժէն գիւղի մը մէջ պատահած երկրաշարժէն գիւղի մը մէջ 300 տուներ փլեր և ութ տուներ վնասուեր են: Երկու ուրիշ գիւղերու մէջ 155 տուներ փլեր և 12 մարդիկ փլատակաց տակ մնալով մեռեր են:

Մալաթիոյ ու շրջակայից մէջ երբեմն երկրաշարժի ցնցմունք կը զգացուին, սակայն վտանգաւոր հետևանք մը չեն ունենար:

ՆՈՐ ՕՐԷՆՔ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

—

Բարձրագոյն իշխանութիւնը հաստատել է պետական խորհրդի հետևեալ որոշումը հայ-կաթոլիկ եկեղեցու կառավարութեան մասին:

1) Հայ-կաթոլիկ եկեղեցու կառավարութիւնը յանձնում է Տիրասպոլի եպիսկոպոսին:

2) Նոյն եկեղեցու գործերի, հոգևորական և հոգևոր ուսումնարանների վերաբերեալ գործավարութիւնը կենդրոնանում է Թիֆլիսի հայ-կաթոլիկ հոգևոր կառավարութեան մէջ:

3) Տիրասպոլի եպիսկոպոսը և Թիֆլիսի հոգևոր կառավարութիւնը վերոյիշեալ գործերը վարում են հայ-կաթոլիկ համայնքներին վերաբերեալ գործադրուող կանոնների համաձայն: Իսկ այդ կանոններով չնախատեսած դէպքերում՝ հռոմէական կաթոլիկ եկեղեցու վերաբերեալ պետական օրէնքների համաձայն:

4) Հայ-կաթոլիկ եկեղեցուն պատկանող երիտասարդների կրթութեան համար, որոնք կըցանկանան իրենց նուիրել հոգևոր ծառայութեան, Թիֆլիսում գոյութիւն ունի հայ-կաթոլիկների հոգևոր ուսումնարան՝ աստուածաբանութեան գիտութիւնների դասընթացով: Այդ ուսումնարանի կանոնադրութիւնը հաստատում է ներքին գործերի մինիստրը, համաձայնութիւն կայացնելով լուսաւորութեան մինիստրի հետ:

5) Թիֆլիսի հայ-կաթոլիկ հոգևոր կառավարութիւնն ունի նախագահ, երկու անդամներ և քարտուղար: 6) Հոգևոր վարչութեան նախագահ և անդամներ ընտրում է Տիրասպոլի եպիսկոպոսը Թիֆլիսի հայ-կաթոլիկ եկեղեցու քահանաներից և նրանց հաստատում ու արձակում է ներքին գործերի մինիստրի համաձայնութեամբ: 8) Անդամների թիւը պակաս լինելու դէպքում՝ առժամանակ գործավարութեանը մասնակցելու համար հրաւիրւում են միւս ծխատէր քահանաներից Կովկասի գլխաւոր կառավարութեան համաձայնութեամբ: 9) Քարտուղարին նշանակում և արձակում է ներքին գործերի մինիստրը:

11) Իւրաքանչիւր տարուայ վերջում հոգևոր կառավարութիւնը եպիսկոպոսին և Կովկասի գլխաւոր կառավարութեանը տարեհաշիւ, իսկ քարտուղարը հաղորդում է նոյնպիսի հաշիւ ամեն ամիս:

11) Հոգևոր կառավարութեան գործավարութիւնը լինում է ռուսերէն լեզուով:

Հայ-կաթոլիկ հոգևոր կառավարութեան վարելիք գործերը հետևեալներն են.

I) Հոգևորականութեան վերաբերեալ գործեր. քահանաների ընտրութիւն. վարչական գոյքերի վերաբերեալ վէճեր. մետրիքական գրքերի վարելը. հոգևոր հայ-կաթոլիկ ուսումնարանի կառավարութեան վերահսկողութիւն և այլն:

II) Աշխարհականների վերաբերեալ գործեր. ամուսնական խնդիրներ (օրինաւոր և ապօրինի ամուսնութիւն, բաժանումն ամուսինների): Ծննդական, ամուսնական և մահուան վկայականներ տալը:

III) Խառն (հոգևորականների և աշխարհականների վերաբերեալ) գործեր: Ապաշխարհանք նշանակելը մարմնաւոր դատարանների կայացրած վճիռների համաձայն:

IV) Տնտեսական գործեր. Վերահսկողութիւն եկեղեցապատկան կալքերի և դրամագլուխների վրայ: Նոր եկեղեցիներ ու մատուռներ կառուցանելու և հիները նորոգելու համար Բարձրագոյն թոյլտուութիւն խնդրել: Ծխերի և ծխական ցուցակներ կազմելու վերաբերեալ գործեր և այլն:

Անդրկովկասում առանց բարձրագոյն թոյլտուութեան չպիտի նոր եկեղեցի կառուցանուի:

Հոգևոր կառավարութեան վճիռների դէմ գանգատ կարելի է տալ Տիրասպոլի եպիսկոպոսին վճռի կայանալուց յետոյ մի ամսուայ ընթացքում:

Պետական գանձարանից հռոմէական եկեղեցու հետևեալ ռոճիկներն են վճարւում՝ հոգևոր կառավարութեան նախագահին 800 ր., անդամներին 500-ական ր., քարտուղարին 800 ր., գրագիրների ռոճիկ և դիւանական ծախքերի համար տարեկան 500-ական ր.:

ՀԱՅ ԿԻՆԸ.

Հայ կնոջ նկատմամբ մեր նախորդ խմբագրականը Տաճկահայկական շրջանակաց մէջ ենթակայ եղած է քննադատութեանց, որոնց մի նմոյշն ի ստորև կը հրատարակենք: Հայ կնոջ ընկերային կացութեան խնդիրն այնքան շահագրգիռ և ուսումնասիրութեան արժանի է որ աւելի չպիտի համարենք դեռ ևս զբաղիլ անով, և մեր շրջահայեաց տեսութիւնները պարզել յառաջիկային:—Մեր այս դիտման կը նպաստէ մանաւանդ Տիկին Արուսեակի ընդդիմախօսութիւնը:

Յարգելի Դաստիարակ:

Ակամայ զարմանք մը ունեցայ երբ կարդացի ձեր «Հայ կինը»: Իհարկէ, երբ խօսքը ընդհանուրի վրայ է, ոչ հարուստ դասուն կրթութիւնը այդ և ոչ ալ աղքատ, որոնք միշտ պզտիկ տեղ մը կը գրաւեն ազգերու մէջ. ուստի թէ Ֆրանսացւոյն և թէ Հայուն միջակ դասը կը ներկայացնէք՝ երբ կ'ուզէք նկարագրել երկոցունց կանայքը: Գաղղիացի կինը կը հնազանդուի, կ'աշխատի և իւր ունեցածն ալ երկանն է, մինչ Հայ կինը չհնազանդիր, չ'աշխատիր և իւր ունեցածին տէրն ալ ինքն է, կ'ըսէք: Երկու ամուսիններու մէջ հնազանդութիւն ըսելով ինչ ըսել կ'ուզէք. Նախ այդ կէտն է որ չեմ հասկնար. կըհասկանամ, այո՛, փոխադարձ սէր ու յարգանք, բայց մէկ կողմանէ միայն հնազանդութիւն չեմ հասկնար: Նկատելով որ մարդ արարածը, այր լինի թէ կին, սխալանաց ենթակայ է, միշտ մէկ կողմանէ հնազանդութիւնը վտանգաւոր չպիտի ըլլար ընտանեկան բարօրութեան՝ հնազանդեցողին յաճախ սխալանաց ենթարկուելովը. կարելի է որ նաւավար մը ինքնագլուխ՝ առանց մեքենավարի օգնութեան նաւը յառաջ կարենար վարել և փոխադարձաբար. չէ՞ որ այդ երկոցուն միանգամայն խորհրդակցութեամբը ու միութեամբն ևեթ կարելի է նաւը իւր ճամբէն չխոտորեցնել. եթէ միշտ մին միւսին հնազանդէր կամ անձնիւր ըստ հաճոյս գործէր, ինչ պիտի ըլլար ճամբորդներուն վիճակը զորս կ'ուզեմ ընտանիքի մը անդամոց նմանեցնել. եթէ այս օրինակս անհարմար կըթուի Ձեզ, կրնամ փորձել. հնազանդեցէք միշտ Ձեր կնոջ, շատ չէ քանի ամիս միայն, կամ թէ հնազանդեցուցէք զանի Ձեզ, այն ատեն դիւրաւ պիտի տեսնէք թէ ո՛ւր կը յանգի մէկ կողման ևեթ հնազանդութիւնը: Երբ բարեկարգ ու անդորր ընտանիք մը կըտեսնէք, մի խաբուիք կարծելով թէ հոն կինն է միայն որ կըհնազանդի, ո՛չ, փոխադարձ հնազանդութիւն կայ հոն, որ ըսել է միաբանութիւն:

Ֆրանսուհին կ'աշխատի, որով և էրկանը շահուն կընպաստէ, մինչ Հայուհին չ'աշխատիր, հետևաբար իւր էրկանը շահուն ալ օգուտ մը չունի, կ'ըսէք. այդպէս կըկարծէք, սիրելի դաստիարակըս. խանութի մը մէջ մէկ հոգի մը աւելի գտնուելով շահը չ'աւելնար՝ եթէ դրամագլուխը միշտ նոյնն է. ինչ կ'ընէ Ֆրանսուհին իւր էրկանը քով. ամսականաւոր պաշտօնէի մը գործը կընար տեսնել և այդ ամսականն է որ կըշահեցնէ իւր էրկանը. բայց ատոր փոխարէն այդչափ ստակ ու թերևս ալ աւելին ուրիշներ չեն առներ լուալու համար այդ ընտանիքի ճերմակեղէնները, արդուկելու համար, կերակուր եփելու համար, անկողին պատրաստելու համար, տունը մաքրելու համար, մանուկը դիեցնելու համար, ևն, ևն. այս ամէնն ստակով օտարներու յանձնուած չեն՝ երբ Ֆրանսացի տանտիրուհին իւր ամուսնոյն խանութին մէջ բուրդ կամ կերպաս փաթթելու կամ անոնց նման ծառայութիւն մը ընելու պարապած է. և երբ Հայ տանտիրուհին բոլոր տնական գործերը ինք կըկատարէ. կրնա՞նք ըսել թէ Հայ կինը իր էրկանը շահուն օգուտ չունի. տարբերութիւն ինչ է. մին խանութին մէջ, միւսը տանը մէջ:

Ֆրանսացի կնոջ ունեցածը էրկանն է. մինչ Հայ կնոջը՝ իրն է, կ'ըսէք, դուք որ այնչափ լաւ գիտէք եւրոպական և օսմանեան ժառանգական օրինաց տարբերութիւնն. եթէ չեմ սխալիր, Եւրոպացին միուած օրէն՝ կինը նորա ստացուածոց կէսին բացարձակ տէրն է. ինչ կ'ուզէք, Հայ կինը իւր ունեցածն ալ ամուսնո՞յն տայ, որպէս զի նորա մահուանէն վերջը ինքն ալ անօթի մեռնի. մի՛, իմ ազնիւ դաստիարակս, մի՛ այդչափ խիստ լինիք Հայ կնոջ մասին, որոց միոյն կը պարտիք Ձեր գիտութիւնը, առողջութիւնը, և Ձեզի պէս Հայոցս ըստուար մի մասը. Հայրաբար ներելով տկար սեռի թերի կողմերուն, մի անտես առնէք նորա լաւ յատկութիւններն՝ որոցմէ զոմանս Եւրոպայի կնոջ քով դժուար պիտի գտնէք՝ եթէ երկոքին ևս լինին կրթեալ հաւասարապէս. գիտցէք որ այդպիսի անխրատ բաղդատութիւններով կը վիրաւորէք խորապէս Հայ կնոջ զգայուն սիրտը. մի՛ նայիք որ լեզու չունին, այդ ըսել չէ թէ չեն զգար. մեր Փիսիկն ալ լեզու չունի, բայց երբ անիրաւութիւն մը ընեմ իրեն, այնպիսի աղու ու խեղճուկ նայուածք մը կը արձակէ վրաս, որ կարծես սիրտս կը կրծէ: Չեմ գիտեր թէ մինչև երբ և ո՞ր ատենն առաջ պիտի երթայ մեր մէջ օտարասիրութիւնն. ինչ հմայիչ բան մը կայ օտարուհւոյն մէջ, չեմ հասկնար. Դուք որ ամուսնութեան քաջալեր ուզած էք ըլլալ երբեմն, ինչպէս չէք վախնար Հայուհին նսեմացնել է, օտարուհին բարձրացնելով. մեր երիտասարդութիւնը որ պատճառ կը փնտռէ չ'ամուսնանալու, հիմա Ձեր այդ յօդուածը կարդալով, տարակոյս մի ունենաք որ, եթէ երբէք օր մը ամուսնանալու դիտաւորութիւն մ'ունենայ, պիտի երթայ փնտռել օտարուհի մը, քանի որ նա իրեն կը հնազանդի. մէկտեղ խանութ կ'երթայ կ'աշխատի ու ունեցածն ալ ամուսնոյն կուտայ. ո՞վ չուզեր առնել կին մը, ո՞վ խենդեցեր է որ Հայ աղջիկ առնէ. գործերնիս եղաւ, կ'մնայ Հայ կնոջ յօդուածագիրն: Մի՛, մի՛ այդպէս արիւնէք Հայ աղջկան խոցոտած սիրտն որուն ընտիր յատկութիւնները նսեմանան արդէն այս դարուս մէջ՝ երբ տակ չունի. մի՛ բաղդատէք Հայ կինը, Ֆրանսուհւոյն հետ. Հայուհին շատ աւելի հլու վիճակ մը ունի ընտանեկան իրաւանց մէջ՝ քան Ֆրանսուհին. աչօքս տեսայ անգամ մը Հայ պատկառելի բժշկի մը Գաղղիացի կնոջ անվայել ընթացքը։

Դուք ինձմէ շատ աւելի աղէկ գիտէք այդ ամէնը, միայն թէ ուզելու էք գիտնալ. պատճառն ինչ է որ այս ամէնը քողով մը ծածկելով, Ֆրանսուհւոյն երկանը խանութ երթալ աշխատիլը միայն կը խօթէք Հայուհւոյն աչքը. գիտեմ, գլուխ ցաւցուցի, բայց գիտցէք, որ տակաւին բան մը կարող ըլլամ գրելու ու գրիչը ձեռքս առնեմ բան մը գրելու համար, առաջին անգամ վերոյիշեալ խնդրոյ վրայ պիտի գրեմ ընդարձակօրէն. առ այժմ, եթէ ամբարտաւանութիւն կը համարէք ըրածս՝ կարծելով թէ կը քննադատեմ զձեզ, ներողամտութիւննիդ հայցելով՝ կը վերջացնեմ կարծիքներս՝ սպասելով աւելի յարմար առթի մը։ ԱՐՈՒՍԵԱԿ

(«Ծաղիկ»)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոյի Մառլի գնալուց առաջ մինիստրական խորհուրդ է կայացել, ուր որոշուել է պատգամաւորների նոր ընտրութիւնները կայացնել օգոստոսի 8-ին (20-ին), իսկ վերընտրութիւնները օգոստոսի 22-ին (սեպտ. 3-ին)։ Շատերը կամենում էին, որ պատգամաւորների ընտրութիւններ կատարուին սեպտեմբերի 20-ին (հոկտ. 2), սակայն մինիստրութիւնը կարևոր է համարել ընդհանուր ձայնատւութեան ժամանակն առաջ ձգել։

Ընտրութիւնները կատարելու օրուայ այդ որոշման մասին գրուեցաւ լրագիրներում. այդ տեղեկութիւնների հետ միաժամանակ երևան եկան յօդուածներ սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկելու մասին։

Այդ մասին զանազան ենթադրութիւններ են անում։ «Correspondais» լրագրի մէջ լոյս տեսաւ այդ մասին մի ընդարձակ յօդուած, որ գրել է Էմիլ Օլլիվիէն. սա կամենում է քաղաքական դեր խաղալ, և իր յօդուածով սահմանադրութիւնը փոփոխութեան ենթարկելու մասին անում է իր առաջարկութիւնները։ Նրա ասելով պատգամաւորները պէտք է ընտրուին զանազան դասակարգերով, և նրանք պատգամաւորների ժողովում դասակարգերի պիտի բաժանուած լինին։ Զինուորականներն, օրինակ, պէտք է քննութեան ենթարկեն զինուորական օրէնքները, արդիւնագործողները---արդիւնագործութեան վերաբերեալ օրէնքները և այլն։ Այդպիսով պալատը բաժանուած կը լինի մի քանի յանձնաժողովների, որոնց որոշումներն ըստ ինքեան շատ անգամ հակառակ կլլինին միմեանց։

—«Journal des débats» հաղորդում է, որ դատական քննիչ Ատալէնը դեռ շարունակում է Միլուայի «վաւերաթղթերի» քննութեան գործը։ Նա բոլորովին համոզուել է Դիւկրէի յանցաւոր լինելու վերաբերմամբ։ Վերջինիս տանը գտել են շատ թղթեր, լրագիրներից կտրած յօդուածներ, որոնց մէջ զանազան նախադասութիւնների տակ կապոյտ մատիտով գծեր են քաշած, և հենց այդ գծած նախադասութիւններից շատերը համարեա բառացի «կերպով մտցրած են վաւերաթղթերի» մէջ։ Բացի դրանից Նորտոնի մօտ խուզարկութեան ժամանակ գտել են Դիւկրէի նամակներն ու հեռագիրները որոնցով վերջինս մատնացոյց է անելիս եղել այս կամ այն յօդուածի վրայ, թէ անհրաժեշտ է այս քաղել կամ միւսը թարգմանել։

Սակայն «վաւերաթղթերի» քննութիւնից մի նոր բան է երևում. այդ այն է՝ որ անգլիական դեսպանատնից խալապէս գողացուած են մի քանի իսկական վաւերաթղթեր, միայն այս բանը պատահել է յունուարին, այն ինչ այն «նամակները», որ ֆրանսիական պատգամաւորների ժողովում կարդացուեցան, իրենց տակ կրում էին վերջին ամիսների թուեր։

Գաղտնի ոստիկանութեան վարչութեան մէջ այն կարծիքի են, որ անգլիական դեսպանատնից իսկական վաւերաթղթերի գողանալը մի կապ ունի Նորտոնի կեղծածների հետ։

Դերուլէդը, որին դատական քննիչը երեք ժամ շարունակ հարցափորձ է անելիս եղել, յայտնել է իր բարեկամներին, թէ այսուհետև ինքը գոնէ մինչև չորս տարի քաղաքականութեամբ չ'պիտի պարապի և մինչև անգամ լրագիրներ էլ չ'պիտի կարդայ։

Իսկ Միլուան, որպէս երևում է Պարիզից լրագիրներին ուղղած հեռագրից, ուղարկել է Րոշֆորին մի հեռագիր, որի մէջ յայտնում է, որ ինքը՝ Միլուան զոհ է գնացել խաբէութեան՝ հաւատ ընծայելով յանդուգն կեղծողին։ Միլուան ապա յարակցում է, թէ իր ցաւակցութիւնն այդ մասին անկեղծ է։

Ֆրանսիայից ստացուած տեղեկութիւնների հիման վրայ՝ անցեալները մենք հաղորդել էինք, որ լուրեր են պտըտւում թէ Կորնելիոս Հերցը մեռել է, սակայն վերջին տեղեկութիւններից երևում է, որ այդ լուրը սխալ է, միայն ուղիղն այս է, որ Հերցը շատ դժուար հիւանդ է, արիւն է թքում և բժշկուելու էլ յոյս չ'կայ։ Նրա թղթերի մասին զանազան լուրեր են պտտւում։ Միքանիսըն ասում են, որ նա իր թղթերից ամենակարևորներն Ամերիկա է ուղարկել և թէ մի մասն էլ անգլիական կառավարութեան ձեռքին է։

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Մենք արդէն հաղորդել էինք, որ Ռուսիան պահանջել է Բուլղարիայից վերջինիս վճարելիք պարտքը։ Այդ պահանջը Ռուսիան վաղուց է անում։

Երբ ռուսական զօրքերը գտնւում էին Բուլղարիայում, որ կառավարւում էր Ռուսիայի կողմից կարգուած կառավարիչներով, Ռուսիան երկրի պահպանութեան համար ծախսեր է արել և այդ ծախսերն այժմ պահանջում է Բուլղարիայից։

Սակայն այժմ լրագիրները հաղորդում են, որ Բուլղարիայի առաջին մինիստր Ստամբուլովը պատասխանել է թէ՝ ոչ միայն Բուլղարիան Ռուսիային ոչինչ պարտ չէ, այլ և նրանից Բուլղարիան պահանջ էլ ունի։ Նա ասում է, որ 1877 թուականին Ռուսիայի տրամադրութեան տակ էին դրուած ահագին գումարներ, որոնք գոյացել էին բուլղարների մէջ հաւաքած փողից և շատ հայրենասէրների նուիրաբերութիւններից։ Այդ փողերի մի մասը պահւում էր Ռուսաց դեսպանատանը Բուխարեստում։

Ստամբուլովի կառավարութիւնը, որ այժմ ներկայացրել է յիշեալ գումարների լրիւ ցուցակը, ասում է, որ այդ փողերը ոչ միայն ծածկում են Ռուսիայի արած ծախսերն, այլ և աւելանում են։ Իսկ այդ աւելցածն, ասում է, Ռուսիան պարտաւոր է վճարել Բուլղարիային։

ՍԵՐԲԻԱ.—Բելգրադից հեռագրել են «Բէյտէրի գործակալութեանը», որ ազատական և նապրեդնիկ կուսակցութիւնների պարագլուխների մէջ բանակցութիւններ են լինում միանալ և մի առանձին կուսակցութիւն կազմել— «պահպանողական կուսակցութիւն» անունով։

Այն դէպքում, եթէ կայանայ այդ համաձայնութիւնը, ենթադրում են, որ այդ նոր կուսակցութեան բոլոր տասն անդամները հրաժարական կըտան և կը հեռանան սկուպշինայից՝ դրանով յայտնելով իրենց բողոքը ռադիկալների քաղաքականութեան դէմ։

—

ՍՊԱՆԻԱ. — Սպանիայում շարունակւում են կալանաւորել, անիշխանականներին, որոնցից շատերն, ինչպէս հաղորդել էինք, առաջուց բանտարկուած էին։ Վերջին օրերս Սևիլում բանտարկել են երկու անիշխանականների՝ սպանական անիշխանական Մինիզին և ֆրանսիական անիշխանական Պիեր Ռեևոյին, որոնք մտադրուած են եղել օդը ցնդեցնել ամբողջ Սևիլը։ Նոյն իսկ այդ չար նպատակով նրանք դեռ մի քանի փորձեր էին արել։

ՌՈՒՍԻԱ և ՉԻՆԱՍՏԱՆ. — Պետերբուրգից գրել են գերմանական լրագիրներին, որ ռուսաց կառավարչական շրջաններում մեծ ուշադրութիւն են դարձնում այն հարցի վրայ, թէ ինչ միջոցներ գործ դնեն չինացիների Սիբիրն հեղեղելու առաջն առնելու համար։ Վերջին ժամանակներս, մանաւանդ, շատ չինացիներ գալիս լցւում են Սիբիր և այնտեղ բնակութիւն հաստատում։ Այդ գաղթականութեան առաջն առնելու համար՝ նախ կարգելուին նրանց արտահանութեան նիւթերը, որ բերւում են Սիբիր, ապա Սիբիրի որոշ շրջաններում կարգելեն նրանց մուտքը, և քիչ ժամանակ անցնելուց յետոյ էլ նրանց վերջնականապէս կարգելեն Սիբիր գաղթելու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նշանաւոր մարդկանց կարծիքներ՝

—Ամենից մեծ բանը մարդու համար ինքն իրեն կառավարել սովորելն է։

Գեօթէ.

⁂

Շատ մարդիկ գործում են ներկայի համար, իսկ քիչերը ապագայի համար։ Այն ինչ իմաստունը երկուսի համար էլ աշխատում է։

—Գործս է իմ արժանաւորութիւնը յայտնում և ոչ թէ ստացուածքս։

Կարլայլ։

⁂

Այն ծնողները, որ իրենց որդուն արհեստ չեն սովորեցնում, սովորեցնում են նրան գողութեան։

Բրահմա։

⁂

Հարստութեան լաւագոյն աղբիւրը խընայողութիւնն է։

Կիկերոն։

⁂

Սիրիր աշխատութիւն, որ եթէ պէտք չը լինի քեզ ապրուստիդ համար, անպատճառ պէտք կըգայ քեզ առողջութեանդ համար։ Աշխատութիւնն առողջարար է թէ մարմնիդ և թէ մտքիդ համար։

Վիլեամ Փեն։

⁂

Անձնազոհութիւնը և անձնավստահութիւնը պիտի սովորեցնեն մարդուն իրեն յատուկ աղբիւրից ջուր խմել, իրեն ճակատի քրտինքով հաց ուտել, ապրուստ ձեռք բերելու համար պատուով աշխատել և իրեն տուած լաւ բաներից՝ շնորհներից մի մասն էլ խընամքով աւելացնել։

Բեկոն.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի. — «Նովոստի»-ն հաղորդում է, որ երեկ կնքել են «Ռուսական առևտրական և կոմիսիոներական բանկի» դրամարկղը և գործերը։ Լուրեր են պտտւում, թէ բանկի վարչութեան անդամների դէմ քրէական դատ է սկսուելու։ Ակցիոներները և յանձնարարողները մնաս չեն կրել, որովհետև կանոնադրութեան համաձայն բանկի խորհրդի և վարչութեան անդամներն առևտրական գործառնութիւնների համար պատասխանատու են իրենց ստացուածքով։ Բորսայում ասում էին, որ ֆինանսական շրջաններում հարց է զարթնցրած վերսկսել բանկի գործառնութիւնները, գլխաւորապէս հացի առևտրում։ Սէլվուշկինի առողջանալու յոյսը դեռ չէ կորած։

«Պետեր. Վեդ.» լսել է, որ շուտով կարգադրութիւն կլինի գիւղատնտեսական բոլոր նիւթերը կշիռքով ծախելու։

«Բիրժ. Վեդ.» հաղորդում է, որ Մոսկուա-Կազանեան երկաթուղու ամբողջ գծի բացումը տեղի կ'ունենայ աշնանը, իսկ յուլիսի առաջին կիսում կ'սկսուի մարդատար և ապրանքակիր գնացքների երթևեկութիւնը Ռեազան-Սասովեան գծի վրայ։

ԲԵՐԼԻՆ. — «Boersen Courier» հաղորդում է, որ երկուշաբթի Բերլին կըժամանէ Թագաժառանգ Ցեսարևիչը և կը մնայ այստեղ երկու օր։

ՊԱՐԻԶ.—Երէկ Սենայի նահանգի պրեֆէկտը (նահանգապետը) արգելեց պատգամաւորներին և քաղաքային խորհրդի անդամներին քաղաքային խորհրդարանում ժողով կազմել, յայտնելով, որ ներս կըթողնի միայն վերջիններին։

Մինիստրութեան այդ կարգադրութեան դէմ բողոքեցին քաղաքային խորհրդի անդամները և պատգամաւորները և դիմեցին Պարիզի ազգաբնակութեանը մի գրութեամբ, որի մէջ, մեղադրելով ոստիկանութեանը, յորդորում են ազգաբնակութեանը խաղաղ մնալ, որպէս զի խռովութեան («Journee»-ի) տեղիք չտրուի։ Կիսապաշտօնական տեղեկութիւնների մէջ ասուած է, որ պրեֆէկտն այդպէս է վարուել Դիւպուիի տուած պաշտօնական հրահանգների հիման վրայ. Դիւպուին չի թողլ տալիս, որ մի որ և է միջանկեալ իշխանութիւն փոխարինէ կառավարութեանը։ Մոնմարտրի վրայ գտնուած «Maison de peuple»-ի մէջ կայացած սոցիալական ժողովում մի քանի հռետորներ քարոզում էին ընդհանուր գործադուլ անել և խորհուրդ էին տալիս չմասնակցել յուլիսի 2-ի (14-ի) ազգային տօնին, որպէս զի այդ միջոցով բողոքեն «աշխատանքի բորսայի» փակուելու դէմ։ «Matin» ասում է, որ 170 սինդիկատներ վճռել են ընդհանուր գործադուլ անել։ «Աշխատանքի բորսայի» կատարողական յանձնաժողովը դիմել է բանուորներին մի գրութեամբ, որի մէջ առաջարկում է նրանց պահպանել խաղաղութիւնը և խմբուել սինդիկատների շուրջը, որոնք, չնայելով ոչ մի արգելքի անհողդողդ կըմնան։ Պարիզի պատգամաւորները և քաղաքային խորհրդի անդամները առաւօտեան «Derminale» լրագրի խմբագրատանը խորհուրդ ունեցան։ Արմատական լրագիրները դատապարտում են «աշխատանքի բորսայի» փակումը, մի քանիսներն էլ գովում են գործ դրած այդ միջոցը՝ միայն առարկութիւններ անելով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի.—Կաթոլիկ հռոմէական հոգևորականութեան գործերի համար հիմնուած է գործակալի (ագենտի) պաշտօն։

Հռոմում երէկ տօնւում էր ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան ճարտարապետների խորհրդի նախագահ Սալովի 30-ամեայ ծառայութեան յոբելեանը։ Յոբելեարին առաջինը շնորհաւորեց մինիստրի օգնական Պետրովը։ Մատուցուած է ուղերձ. ստացուած են շնորհաւորական շատ հեռագիրներ։

«Նով. Վրեմ.» լսել է, որ «Ռուսական առևտրական և կոմիսիոներական բանկի» ակցիոներների խորհուրդը որոշել է միջնորդել ժամանակաւոր վճարները հատուցանելը յետաձգել և պարտաւորեցնել հին վարչութեանը երեք ամսուայ ընթացքում հաշիւ ներկայացնել բանկի բոլոր գործառնութիւնների համար։ Ընտրուած են ժամանակաւոր վարչութեան մասնաժողով։

ՊԱՐԻԶ.—Լատինական քաղաքամասում ամեն ինչ խաղաղ է. «Avenue de la republugue»-ն փողոցի վրայ մանաւորապէս Օբերկամփի փողոցին մօտ, անկարգութիւններ տեղի ունեցան։ Կենդրոնացնելով իր ոյժերը Պարիզում՝ կառավարութիւնը երեկ փակեց Մանու-Միմեսարի «աշխատանքի բորսան»։ Այդ միջոցը շատ յաջողութեամբ գործադրուեց։ Երեկոյեան մի քանի պատգամաւորներ և քաղաքային խորհրդի անդամներ բողոք հրատարակեցին։ Շատ լրագիրներ, որոնց թւում և «Journal des debats», խրախուսում են կառավարութեան արածը։

Նախագահ Կարնոն հանգստացաւ և կրկին վերադարձաւ Մառլի։

Պարիզի 17 պատգամաւորներ և քաղաքային խորհրդի 50 անդամներ այսօր հաւաքուեցան և ստորագրեցին երեկուայ խմբագրած հրաւէրին, որով խորհուրդ են տալիս Պարիզի ազգաբնակութեանը խաղաղութիւն պահպանել։ Այդ հրաւէրը պատերից կըպոկոտի։ Աշխատանքի բորսայի շուրջն ամեն ինչ խաղաղ է։

—

ԲՈՐՍԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունիսի

Մուրհ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում 10 ֆր. ստեր. համար	94,10.	առկ
Բեռլինի 100 մար. . .		
Պարիզ 100 ֆրանկի.	37, 30	—
Մուրհակ. կուրսի տրամադրութ.		
Նոր կտրած պոլուիմպ 7,55 առք,	7,57	ծախ.
Մաքսային կտրոնը (100 մետալ ռուբլուն)... . . $150\frac{3}{4}$ առք.	$151\frac{1}{4}$	առկ.
Արծաթը . . .		
Բորսային զեղչը .	$4\frac{1}{2}$ մինչև $5\frac{1}{2}$%	
Պետ. բան. Ա. հրատ. 5% տոմս.	$103\frac{1}{2}$	առք.
2-րդ . . .	$103\frac{1}{4}$	— —
1883 Թուի 6% ոսկեայ ռենտը.	$152\frac{1}{4}$	առք.
1884 Թուի 5% — —	159	—
Արևելեան փոխ. 100 և 1000 ռուբլիանոց 5% Բ. հրատ.	$101\frac{1}{4}$	—
,, ,, ,, Գ. հրատ.	$103\frac{1}{4}$	առկ.
1864 Թ. Ա. Ներքին փոխառու.		
վիճակահան. 5% տոմսեր . .		—
1866 Թ. Բ. ,, ,, .		—
Արքունի երկաթուղային ռենտը	$103\frac{1}{4}$	—
Ներքին փոխառ. 4% I սերիան	$95\frac{3}{4}$	—
,, ,, II սերիան	95	առկ.
,, ,, III սերիան	$94\frac{3}{4}$	առք.
,, ,, IV սերիան	$94\frac{3}{4}$	—
Ազն. կալ. բան. 5% գրաւաթ.	$100\frac{1}{4}$	—
,, $4\frac{1}{2}$%	$99\frac{1}{4}$	—
Արք. ազն. կալ. բան. 5% վիճակահանութեան տոմսերը .	$194\frac{3}{4}$	առկ.
Հարաւ-Արևմտեան երկաթուղ.		
4% օբլիգացիան . .	$93\frac{1}{4}$	առք.
Մոսկուա-Ռեազանի . .	93	—
Ռեազան-Ուրալի . . .	99	—
Կուրսկ—Կիևի . . .	$99\frac{1}{4}$	առկ.
Կալ. փոխադ. վարկի ընկեր.		
$4\frac{1}{2}$% ընկեր. գրաւաթղթերը	$155\frac{1}{4}$	—
5%	$100\frac{7}{8}$	—
Պետերբուրգի քաղ. վարկի ընկ.		
5% օբլիգացիան . . .	$101\frac{1}{4}$	առք.
Մոսկուայի	$101\frac{1}{4}$	
Օդեսսայի $5\frac{1}{2}$% . . .	$100\frac{3}{4}$	—
Թիֆլիսի	$98\frac{1}{2}$	առկ
Լեհաստանի կալ. բանկի 5%		
գրաւաթղթերը . . .	$99\frac{3}{4}$	առք..
Խերսոնի նահանգի կալ. բանկի		
5% և $5\frac{1}{2}$ գրաւ. թղ. $100\frac{7}{8}$ և	$100\frac{3}{4}$	առք.
Խարկովի կալ. բանկի 5% .	$100\frac{3}{4}$	—
Պոլտաւայի . . .	$100\frac{1}{4}$	
Տուլայի . . .	$100\frac{3}{4}$	—
Կիևի . . .	$101\frac{1}{4}$	
Մոսկուայի . . .	$101\frac{1}{4}$	—
Բեսարաբիա—Տաւրիկեան .	$100\frac{1}{2}$	—
Նիժն.—Սամար. . .	101	—
Դոնի . . .	$100\frac{3}{4}$	—
Վիլնայի . . .	$100\frac{7}{8}$	—
Թիֆլիսի 5% և 6% . $101\frac{1}{4}$ և	$100\frac{1}{4}$	ծախ.
Քութայիսի . $101\frac{1}{4}$ և	$100\frac{1}{4}$	—
Ակցիաների գները . .		—
Պետերբ. և փոխառու բանկինը	455	—
Միջազգային առևտրական .	465	առկ.
Վոլգա-Կամայի առևտրակ. .	813	—
Սիբիրի բանկի. . .	600	—
Բեսսարաբ.—Տաւրիկ. .	565	ծախ.
Խարկովի կալուածական .	515	առք.
Պետերբ.-Տուլայի . .	435	ծախ.
Պոլտաւայի . .	605	առք
Նիժեգորոդ.-Սամարայի .	637	—
Վիլնայի . .	615	—
Դոնի . . .	690	—
Կիևի . . .	810	ծախ.
Մոսկուայի . .	610	—
1827 Թ. կրակից ապահովող ռուսաց ընկերութիւն . .	1150	առք
Հիւսիս. ապահովող ընկ. .	248	—
,,Ռոսսիա'' ,, ,, .	298	—
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն .	715	—
,,Կովկաս և Մերկուրի'' ընկ .	400	
Ռուս. երկաթ. գլխ. ընկեր. .	246	—
Մոսկուա-Ռեազանի երկաթ. .	464	—
Կուրսկ-Կիևի . . .	365	—
Ռըբինսկ-Բոլոգովի . .	$80\frac{1}{4}$	առկ.
Գրեազ-Ցարից. . .	$162\frac{3}{4}$	—
Հարաւ-Արևմտեան . .	115	—

Բորսայի տրամադրութիւնը մեղմ է։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Երկաթուղի



Թիֆլիսից Բաթում է գնում մարդատար № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 30 ր., և Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Թիֆլիսից Բաթում է գնում № 4 պօստային գնացքը, երեկոյեան 6 ժ. 50 ր., և Բաթում է հասնում առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Թիֆլիսից Բագու է գնում պօստային № 3 գնացքը ցերեկը ժամը 1-ից 20 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս մարդատար № 1 գնացքը առաւօտեան 9 ժ. 45 ր անց, իսկ *Թիֆլիս* է հասնում երեկոյեան ժամը 9-ից 52 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս պօստային № 3 գնացքը գիշերուայ ժամը 11-ից 25 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում ցերեկը ժամը 12-ին 25 ր. անց։

Բագուից պօստային № 4 գնացքը դուրս է գալիս գիշերուայ ժամը 11-ից 10 ր. անց և Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 5-ից 50 ր. անց։

Պօստային կառքերի

Երթևեկութիւնը ԹԻՖԼԻՍԻ և ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻ միջև մայիսի 1-ից սկսած մինչև նոյեմբ. 1-ը։

ԹԻՖԼԻՍԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Պասսանաուր կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 10-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 3-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուսը). առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 5-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Վլադիկաւկազ։

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Գուդաուրում և միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 3-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 5-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին հասնում է Թիֆլիս։

ԱՄԱՌԱՆՈՑԱՅԻՆ ԳՆԱՑՔ

Թիֆլիսից Միխայլովո գնում է № 24 գնացքը ճաշից յետոյ ժամը 3-ին,

Միխայլովից Թիֆլիս է գալիս առաւօտեան ժամը 8-ից 10 րոպէ անց։

Թիֆլիսից Գանձակ գնում է № 47 գնացքը երեկոյեան ժամը 9-ից 20 րոպէ անց։

Գանձակից Թիֆլիս է գալիս № 48 գնացքը ցերեկը ժամը 1-ից 30 րոպէ անց։

Շոգենաւերի



Երթևեկութիւնը մայիսի 8-ից սկսած.

ԱՊՐԱՆՔԱԿԻՐ ՄԱՐԴԱՏԱՐ ԳԻԾ

Բաթումից գնում է ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6-ի և հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Բաթում գալիս է հինգշաբթի օրերը, կէսօրուայ մօտերքը։

Փոթից գնում է Օդեսսա՝ ուրբաթ օրերը գործերը վերջացնելուց յետոյ։

Փոթից գնում է Բաթում՝ հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9-ին։

Փոթի գալիս է՝ երեքշաբթի օրերը ցերեկը՝ Օդեսսայից։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւերում ընդունւող II և III կարգի ճանապարհորդները կերակրեղէն չեն ստանում։

ԲԱԹՈՒՄԻՑ դուրս է գալիս դէպի ՕԴԵՍՍԱ

Շաբաթ օրը՝ լոյս կիրակի, ժամը 2-ին, շրջանառու ընթացքով մտնում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրը՝ գիշերուայ $11^{1}/_{2}$-ին, ճեպընթաց նաւը և մտնում է միայն Եալթա և Սեւաստոպոլ։

Երեքշաբթի օրը՝ գիշերուայ ժամը 2-ին, շրջանառու ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, ուղիղ գծով, Նովորոսիյսկի և Կերչի վրայով։

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ն, դուրս է գնում դէպի Կ. Պոլիս՝ երկու շաբաթը մի անգամ։

ՕԴԵՍՍԱՅԻՑ գալիս է ԲԱԹՈՒՄ

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստներն է մտնում։

Ուրբաթ օրերը՝ առաւօտեան, ճեպընթաց, Եալթա և Սեւաստոպոլ հանդիպելով։

Երկուշաբթի՝ երեկոյեան, շրջանառու ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Նովորոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՆՈՎՔ ՊԷՐՊԵՐԵԱՆԻ
(Երգիծաբան)
ԼՈՒՍԱՆԿԱՐԸ
Հրատ. Վահան Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻ.
Գոյացած հասոյթի մի մասը որբերին է պատկանում.
Գինն է 5 ղրուշ Ռուսիայի համար 50 կոպ.։
Վաճառւում է Կ. Պոլսում, Վ. Գ. Զարդարեանի գրավաճառանոց-թղթավաճառանոցում, իսկ Թիֆլիսում Կենտրոնական գրավաճառանոցում։
(Խմբ.) 20—9.

ՇՂՆԷԹ ԱՄԱՌԱՆՈՑ
Ամենալաւ մասում և ամենալաւ տան մէջ վարձով տրւում են ԵՐԿՈՒ չոր, մաքուր և լուսաւոր ՍԵՆԵԱԿՆԵՐ (երկրորդ յարկում) իրենց առանձին մուտքով, պատշգամով, մառանով և խոհանոցով։
Կեցող ընտանիքը պէտք է սակաւանդամ լինի և մանր երեխաներ չունենայ։ Գնի մասին հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատանը։
10—2

ԹԱՏՐՈՆ
ԳՐԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Առաջիկայ 1893/94 թ. ձմեռուան ընթացքում լոյս կտեսնէ երկու գիրք բաղկացած 10—14 տպագր. կան թերթերից, մեծադիր երես նրով, տպագրած երկու սիւնակի վրայ:
-ն գիրքը կհրատարակուի 1893 թուի նոյեմբերին, իսկ II-ը 1894 թուի մարտին
Երկու գրքի գինն է 3 ր., 30 կ. (հաշուելով և ճանապարհածախսն օտարաքաղաքացիների համար), իսկ իւրաքանչիւր հատորն առանձին 2 ր. 25 կոպէկ։
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1. Հայկական բեմի ռեպերտուարը (ցուցակ պիեսների)։
2. Թատերգութիւններ ինքնուրոյն և թարգմանական, որոնք ներկայացնելու թոյլատրուած են։
3. Մենախօսութիւններ, տեսարաններ և ոտանաւորներ։
4. Օպերաների լիբրետտօ։
5. Ռեժիսսէօրական բաժին, պիեսների ներկայացման եղանակը, հեղինակների ցուցմունքը դեկորացիաների և զգեստների վերաբերմամբ. յօդուածներ գրիմի մասին և գործնական նկատողութիւններ բեմական կառավարիչների համար։
6. Քննադատական յօդուածներ թատրոնական գեղարուեստի և երաժշտութեան մասին։
7. Յօդուածներ թատրոնի և գեղարուեստի այլ ճիւղերի պատմութիւնից, բեմական գործիչների կենսագրութիւնները և նրանց կենդանագրերը։
8. Տեղեկութիւններ գեղարուեստական երկերի մասին Ռուսիայում և արտասահմանում։
9. Մատենախօսութիւն։
Հրատարակիչ՝ Աղէքսանդր Թարխանեան
Դիմել հետևեալ հասցէով Тифлисъ Александру Тарханьянъ.
10—9



(М.) 6—3.

ՁԵՒԵԼՈՒ ԵՒ ՀԱԳՈՒՍՏԻ ՁԵՒԵՐԻ ԴՊՐՈՑ
Երկու սեռի համար։ Այդտեղ աւանդւում են ձևելու գաղտնիքը, որ կատարւում է բնական մեծութեամբ իբրև հագուստի դէպք, և այդ իսկ պատճառով այստեղ սովորել են պատրաստել կանանց զգեստներ տարբեր ձևերով և մինչև անգամ երկու շաբաթուայ ընթացքում։ Կարում պատրաստում են և կարսետներ, մաքրում են զգեստներ, հանում բծեր և վարձով տրւում են ամազոնկաներ ԴԷՅԿԱՐԽԱՆՈՎԻ մօտ, Միքայէլեան փողոց, № 53.
(442) 2—2

„ԿՈՒԶՄԻՉԻ ԴԵՂԱԽՈՏԻ“
ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏՈՒՄ
Ծախւում է «Ephedra vulgaris» (թանաւոր փուշ) խոտը, որ ունի խեժական- բալսամի յատկութիւն և որ թարմ ու նոր է մայիսին հաւաքած, իւրաքանչիւր ֆունտի գինն է 1 ր., դեղն ուղարկւում է ընդարձակ բացատրութիւններով հանդերձ, կառավարութեան թոյլտուութեամբ կազմուած. նոյն պահեստում կան բրոշիւրներ էֆեդրի յատկութիւնների և նրանով ոսկրացաւից և ամեն տեսակ բորբոքումներից (կատարը) բժշկւելու միջոցների մասին։ Յիշեալ դեղից 3 ֆ. գնողի համար գունաւոր պատկերներով բրոշիւրները ձրի կ'ուղարկուին։ Տրագիրները կ'ուղարկւին և վերադիր վճարով։
Հասցէն՝ Г. Бузулукъ, (Самарской губерн.) въ складѣ хвойника Сергѣю Зиновьевичу Орлову.
(245) 2—1

ԿԵԱՆՔԻ ՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Պետերբուրգ Նևսկի պր. №3
Ռուսիայում ընկերութիւնը Բարձրագոյն Թոյլտուութիւն է ստացել 1889 թ. յունիսի 2-ին։
Ընկերութեան գործունէութեան վրայ կառավարչական մշտական իրական հսկողութիւն է նշանակուած։ ՈՒՐԲԷՆ ընկերութիւնը 1890 թուին Ֆրանսիայում և Եւրոպայի միւս պետութիւնների մէջ 50,000,000 ֆրանկի ապահովութիւն է արել։
ՈՒՐԲԷՆ (L'URBAINE)
Օգուտին մասնակցելու փոխարէն «Ուրբէն» ընկերութիւնը ոչ մի ընթացիկ պրէմիա չէ վերցնում կեանքն ապահովողի հիւանդութեան դէպքում և, չնայելով դրան պոլիսը պահում է իւր ոյժը.
Գլխաւոր ներկայացուցիչ, Անդրկովկասի, Անդրկասպեան և Թուրքեստանի երկրների, նոյնպէս և Բուխարայի համար է՝ Պոլակ և Ընկ. առևտրական տունը Թիֆլիսում, Վելեամինովսկայա փողոց, տուն № 10, III դիմնազիոնի հանդէպ։ Գլխաւոր վերատեսուչն է ՄԻԽԱՅԻԼ ՕՍԻՊՈՎԻՉ ՉԻԺԻԿԸ։ Կանոնադրութիւնը և զանազան բացատրութիւններ կարելի է ստանալ Բաթումում, Բագւում, Սամարղանդում—Պոլակ և ընկ. գրասենեակներում և ընկերութեան բոլոր գործակալութիւններից։
26—17

Leichner's Fettpuder
ԼԷՅԽՆԵՐԻ ԻՒՂԱԼԻ ՊՈՒԴՐ
ՏՈՒՓԸ 1 ՌՈՒԲԼԻ
Այս պուդրը թէ ցերեկուայ և թէ գիշերուայ համար է և մարմնի վրայ աննկատելի է։ Մարմնի մորթի գեղեցկութիւնը աւելացնելու կոսմետիքական միջոցներ։ Թատրոնական գրիմի համար միջոցներ։ Նրեսի իւղալի կարմիր ու սպիտակ չպարներ։ Յօնքերի համար մատիտներ։
Գտնւում են Ռուսիայի բոլոր դեղատնային և կոսմետիքական խանութներում։
Լ. ԼԷՅԽՆԷՐ ԲԵՐԼԻՆՈՒՄ
Բելգիական արքունի թատրոնի մատակարար։ Ռուսիայի համար գլխաւոր պահեստն է, Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ. Կոլոկոլնայա 18.
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
6—4

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET C^{IE}
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“
Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ։
Բաթումից Մարսէլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։
Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գինն ունին։
Բաթումից մեկնում է՝
Չորեքշաբթի 30 յունիսի շոգենաւ «Մինգրելիա» կապիտան Փիրուէն և այդպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։
Տեղեկութիւններ ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին։
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ Դ'ԱՐՆՈՅԻՆ, Նարեբեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ,
Բագւում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։
Նովորոսիսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։
Զինւորի ցուցահանդէսը գնալ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւններ թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւրից շոգենաւի մեկնելու ժամանակի մասին
(244) 20—1

Доз. Цензурою Тифлисъ, 28-го Іюня 1893 г. Տպարան և Վիմոգ. Ա. Մելիք-Շահնազարեանցի. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы